«Արզնիգազ» ՍՊԸ
ՀՀ, Կոտայքի մարզ, Արզնի համայնք, Երևան-Սևան մայրուղի, հ. 2
Հեռ.՝ (+374) 98 044004

Պ. Գ. Բաղրամյան
Խ. Հ՝ Հ՝ Գրիգորյանի հետ
և գրասենյակի պետ

28/11/2022թ.

Հայաստանի Հանրապետության Կառավարություն
Փոխվարչապետ՝ Միհեր Գրիգորյանին
«Արզնիգազ» ՍՊԸ
(ՀՎՀՀ՝ 03316637)
Տնօրեն՝ Ռոբերտ Աբրահամյանից

ԴԻՄՈՒՄ

Կոտայքի մարզ **«28» Նոյեմբեր 2022թ.**

«Արզնիգազ» ՍՊ ընկերությունը հանդիսանում է **ԱԳԼՃԿ**, որը ձեռնարկատիրական գործունեության ընթացքում, **սեփական կարիքների համար**, ամսեկան, սպառում (օգտագործում) է 5 000 000 – 7 000 000 դրամի էլեկտրոէներգիա: Սույն թվականի գարնանը կազմակերպությունը որոշում կայացրեց **բացառապես սեփական կարիքների օգտագործման** համար իրեն պատկանող տարածքում տեղադրել արևային կայան:

«Արզնիգազ» ՍՊԸ-ն լիզինգային պայմանագրով, կնքված սույն թվականի մարտ ամսին «ԱԿԲԱ Լիզինգ» Վարկային կազմակերպություն ՓԲԸ հետ, ձեռք բերեց արևային կայանը ներմուծման ճանապարհով, որը մի շարք խնդիրների, **մասնավորապես լոգիստիկայի** պատճառով նախատեսված ժամկետից շատ ավելի ուշ բերվեց Հայաստան: Արևային կայանի տեղադրման խոչնդոտ հանդիսացավ նաև ԱԳԼՃԿ-ին կից, «Արզնիգազ» ՍՊԸ-ին պատկանող **հողատարածքի հողահանման և հողահարդեցման աշխատանքները**:

Հավելենք, որը «Արզնիգազ» ՍՊԸ-ն, գործող կանոնակարգերի համաձայն, դիմել էր «ՀԷՑ» ՓԲԸ, ով իր հերթին տրամադրել էր համապատասխան թույլտվություն (№ ՏՊ-650-0□4/0701 առ 18□03□2022թ□):

Խնդրում ենք, հաշվի առնելով վերոգրյալը, **թույլատրել** «Արզնիգազ» ՍՊԸ-ին ԱԳԼՃԿ-ին կից, «Արզնիգազ» ՍՊԸ-ին պատկանող տարածքում **թույլատրել գործածել պատրաստի արևային կայանը** վերը նշված թույլտվության հիման վրա:

«Արզնիգազ» ՍՊԸ
Տնօրեն՝ Ռ. Աբրահամյան

«ԱՐԶՆԻԳԱԶ»
«АРЗНИГАЗ»
«ARZNIGAZ»
03316637

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՆՐԱՑԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
№ 7420 28 11 20 22 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ

ՀՀ, ԵՐԵՎԱՆ, ՍԱՐՅԱՆ 22, ՀԵՌ.(374-10) 522522, ՖԱՔՍ (374-10) 525563

« 05 » 12 2022թ.

№ ՍԱ/34.4-Ղ4-2/4266-2022

«Արզնիգազ» ՍՊԸ-ի տնօրեն
Ռոբերտ Աբրահամյանին

Ի պատասխան ՀՀ փոխվարչապետ Միհր Գրիգորյանին
հասցեագրված՝ Ձեր 28.11.2022թ. գրության

Հարգելի պարոն Աբրահամյան,

Ինքնավար էներգաարտադրության գործընթացի շրջանակում «Արզնիգազ» ՍՊԸ-ի գրության առնչությամբ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովն իր իրավասությունների շրջանակում հայտնում է հետևյալը.

Մինչև 2022 թվականի մայիսի 1-ը գործող խմբագրությամբ «Էներգետիկայի մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով սահմանված «ինքնավար էներգաարտադրող» հասկացության համաձայն՝ ինքնավար էներգաարտադրողը սեփական կարիքների բավարարման համար էլեկտրական էներգիա արտադրող իրավաբանական կամ ֆիզիկական անձն էր, որի տեղակայանքների դրվածքային հզորությունը չէր կարող գերազանցել էլեկտրական էներգիայի իր սպառիչների տեղակայված ընդհանուր հզորությունը, բայց ոչ ավելի, քան 150 կՎտ-ը: Արևային էներգետիկայի զարգացման և այդ ուղղությամբ ներդրումների խթանման նպատակով, մինչև 2022 թվականի մայիսի 1-ը գործող խմբագրությամբ «Էներգետիկայի մասին» օրենքի անցումային դրույթներով (59-րդ հոդվածի 6-րդ մաս), արևային էներգիայի կիրառմամբ ինքնավար էներգաարտադրողների տեղակայանքների առավելագույն դրվածքային հզորությունը ժամանակավորապես սահմանվել էր 500 կՎտ:

2022 թվականի մայիսի 1-ից ուժի մեջ մտած «Էներգետիկայի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2021 թվականի հունիսի 4-ի ՀՕ-261-Ն օրենքով «Էներգետիկայի մասին» օրենքը լրացվել է «Ինքնավար էներգաարտադրությունը և միկրոէներգաարտադրությունը» գլխով, որում տեղ գտած իրավակարգավորումների (56.1-րդ հոդվածի 5-րդ մաս) համաձայն՝ ինքնավար էներգաարտադրողի տեղակայանքների դրվածքային հզորությունը չի կարող գերազանցել երաշխավորված մատակարարի հետ՝ բաշխման ցանցին իր յուրաքանչյուր միացման կետի համար իբրև սպառող կնքած պայմանագրով ամրագրված առավելագույն թույլատրելի հզորությունը, բայց ոչ ավելի, քան 150 կՎտ-ը:

Վերոգրյալից հետևում է, որ մինչև 2022 թվականի մայիսի 1-ը գործող խմբագրությամբ «Էներգետիկայի մասին» օրենքով սահմանված իրավակարգավորումների շրջանակում թույլատրելի՝ մինչև 500 կՎտ դրվածքային հզորությամբ ինքնավար էներգաարտադրություն իրականացնելու մտադրություն ունեցող սպառողները մինչև 2022 թվականի ապրիլի 30-ը ներառյալ ժամանակահատվածում պետք է ամբողջությամբ ավարտած լինեին մինչև 500 կՎտ դրվածքային հզորությամբ ինքնավար կայանի կառուցման աշխատանքները: Հետևաբար, «Արզնիգազ» ՍՊԸ-ն մինչև 2022 թվականի ապրիլի 30-ը ներառյալ ժամանակահատվածում պետք է ամբողջությամբ ավարտած լիներ 500 կՎտ դրվածքային հոզորությամբ ինքնավար կայանի կառուցման աշխատանքները: Ի դեպ, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից 2022 թվականի մարտի 18-ին «Արզնիգազ» ՍՊԸ-ին տրված՝ բաշխման ցանցին ինքնավար էներգաարտադրողի կայանի (հզորության) միացման թույլտվությամբ (տեխնիկական պայմաններով) ևս ինքնավար կայանի կառուցման և բաշխման ցանցին միացման վերջնաժամկետը սահմանված է եղել 2022 թվականի ապրիլի 30-ը:

Ինչ վերաբերում է նրան, որ մինչև 500 կՎտ դրվածքային հզորությամբ ինքնավար էներգաարտադրություն իրականացնելու մտադրություն ունեցող առանձին սպառողներ (տնտեսվարողներ) տարբեր պատճառներով չեն հասցրել մինչև 2022 թվականի ապրիլի 30-ը ներառյալ ժամանակահատվածում ավարտել ինքնավար կայանի կառուցման, արտադրող էներգատեղակայանքների տեղակայման աշխատանքները, և վերջիններս այդ մասով խնդրում են կիրառել բացառություն, ապա հայտնում ենք, որ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովն օրենսդրությամբ սահմանված՝ վերը նշված իրավակարգավորումների մասով բացառություն կիրառելու հայեցողական լիազորություն չունի:

Բացի այդ, անհրաժեշտ ենք համարում նշել, որ «Էներգետիկայի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2021 թվականի հունիսի 4-ի ՀՕ-261-Ն օրենքն ընդունվել է 2021 թվականի հունիսի 4-ին, պաշտոնապես հրապարակվել՝ 2021 թվականի հունիսի 18-ին, իսկ ուժի մեջ է մտել 2022 թվականի մայիսի 1-ին:

Օրենքի ընդունման, հրապարակման և ուժի մեջ մտնելու՝ մոտ մեկ տարի տևողությամբ ժամանակային տարբերությունն ինքնանպատակ չէր, և այդ տարբերությունը սահմանվել էր հենց այն նպատակով, որպեսզի ինքնավար էներգաարտադրություն իրականացնելու մտադրություն ունեցող սպառողները վաղաժամ տեղեկացված լինեին ոլորտային իրավակարգավորումների փոփոխությունների մասին և, ըստ այդմ, ժամանակային առումով գնահատեին բոլոր հնարավոր ռիսկերը՝ վարկավորման, նախագծման, արտադրող էներգատեղակայանքների տեղակայման և կայանի կառուցմանն առնչվող այլ գործոնների մասով:

Այդուհանդերձ, անհրաժեշտ ենք համարում նշել, որ մինչև 2022 թվականի մայիսի 1-ը գործող խմբագրությամբ «Էներգետիկայի մասին» օրենքով սահմանված իրավակարգավորումների շրջանակում թույլատրելի՝ մինչև 500 կՎտ դրվածքային հզորությամբ ինքնավար էներգաարտադրություն իրականացնելու մտադրություն ունեցող բոլոր այն սպառողները (տնտեսվարողները), ովքեր մինչև 2022 թվականի ապրիլի 30-ը ներառյալ ժամանակահատվածում չեն հասցրել ավարտել ինքնավար կայանի կառուցման աշխատանքները և հետևաբար, այդ հզորությամբ չեն կարող իրականացնել ինքնավար էներգաարտադրություն, էներգաարտադրող տեղակայանքները շահագործելու միջոցով էլեկտրական էներգիայի սեփական սպառման պահանջարկը բավարարելու համար կարող են օգտվել «Էներգետիկայի մասին» օրենքով սահմանված՝ բացառապես սեփական կարիքների համար կամ առանց գնման երաշխիքի իրավունքի էլեկտրական էներգիայի արտադրության գործունեություն իրականացնելու իրավունքից:

<u>Բացառապես սեփական կարիքների համար էլեկտրական էներգիայի արտադրություն.</u>

«Էներգետիկայի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետի համաձայն՝ կարգավորման ենթակա չէ բացառապես սեփական կարիքների համար էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունը՝ արտադրության ժամանակահատվածում: Սա նշանակում է, որ բացառապես սեփական կարիքների համար էլեկտրական էներգիայի

արտադրություն իրականացնելու մտադրություն ունեցող անձը՝ բացառապես սեփական կարիքների համար էլեկտրական էներգիա արտադրող կայանի կառուցման ժամանակահատվածի համար ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովից պետք է ստանա էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա՝ հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի N374-Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգով սահմանված ընթացակարգին համապատասխան: Մասնավորապես, էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիայի ստացման հայտը պետք է լրացված լինի նշված կարգի №1 հավելվածի համաձայն և պարունակի №2 հավելվածով տվյալ տեսակի լիցենզիայի համար նախատեսված փաստաթղթերը: №2 հավելվածի 1-ին կետի համաձայն՝ արևային էլեկտրակայանի կառուցման ժամանակահատված ներառող էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայի ստացման հայտը պետք է պարունակի հետևյալ փաստաթղթերը.

1) գործարար ծրագիր՝ համաձայն նշված կարգի №4 հավելվածի կամ կայանի կառուցման նախագիծը,
2) լիցենզավորված գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ համապատասխան նպատակային (գործառական) նշանակությամբ հողամասի (շենք, շինության) նկատմամբ հայտատուի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը և համապատասխան որակավորում ունեցող անձի կողմից կազմված հողամասի հատակագիծը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ իրավասու մարմնի կողմից տրված հատակագծի պատճենը: Հողամասի (շենք, շինության) վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման դեպքում, եթե սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայականում առկա չէ նշում վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման ժամկետի վերաբերյալ, անհրաժեշտ է ներկայացնել նաև վարձակալության (ենթավարձակալության) կամ անհատույց օգտագործման պայմանագրի պատճենը, ընդ որում, ենթավարձակալության դեպքում՝ նաև հիմնական վարձակալության պայմանագրի պատճենը: Այդ ժամկետները պետք է լինեն լիցենզիա ստանալու հայտով հայցվող ժամկետից ոչ պակաս,

3) հայտարարություն Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային http://www.azdarar.am/ կայքում՝ համաձայն նշված կարգի №5 հավելվածի,
4) երաշխիք՝ համաձայն նշված կարգի №3 հավելվածի,
5) էլեկտրական էներգիայի բաշխման կամ հաղորդման լիցենզիա ունեցող անձից էլեկտրական ցանցին պահանջվող հզորությամբ միացման հնարավորության վերաբերյալ տեղեկանք՝ էլեկտրական էներգիայի արտադրության կամ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության լիցենզիայի դեպքում:

Էլեկտրաէներգետիկական համակարգում նոր արտադրական հզորությունների կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածի համար, «Պետական տուրքի մասին» օրենքի համաձայն, լիցենզիայի համար վճարվում է պետական տուրք՝ բազային տուրքի 100-ապատիկի չափով: Նույն օրենքի համաձայն՝ բազային տուրքի չափ է սահմանվում 1000 դրամը:

<u>Առանց գնման երաշխիքի էլեկտրական էներգիայի արտադրություն.</u>

Սեփական սպառման պահանջարկը բավարարելու համար էլեկտրական էներգիայի արտադրություն իրականացնելու մտադրություն ունեցող անձինք «Էներգետիկայի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված կարգով կարող են ստանալ էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա՝ համաձայն հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի N374Ն որոշմամբ հաստատված կարգի (հանձնաժողով ներկայացնելով վերը թվարկված փաստաթղթերը)՝ միաժամանակ հրաժարվելով նույն հոդվածի 1.2-րդ մասում նշված գնման երաշխիքից, որից հետագայում այլևս օգտվել չեն կարող: Սա նշանակում է, որ կայանի կառուցման ավարտից հետո հիշյալ անձինք չեն կարող օգտվել «Էներգետիկայի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1.2-րդ կետով սահմանված՝ քսան տարվա ընթացքում տվյալ կայանում արտադրվող ամբողջ էլեկտրական էներգիայի՝ օրենքով սահմանված պարտադիր գնման իրավունքից: Այս դեպքում, առանց գնման երաշխիքի իրավունքի էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ունեցող անձինք կարող են իրենց սեփական կարիքների համար սպառել կայանում արտադրվող էլեկտրական էներգիան, իսկ ավելցուկն իրացնել էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայում՝ շուկայի կանոններով սահմանված կարգով:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի մասնակցի գրանցման կարգը, առևտրի իրականացման և հայտերի ներկայացման կանոնները սահմանված են ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N516-Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առևտրային կանոններով:

12/5/2022

X

ՍԵՐԳԵՅ ԱՂԻՆՅԱՆ

Ս.Աղինյան

Կատարող՝ Սևակ Բաբայան ☎ (010) 52-85-77 (318)

Յ	Վճարված է	N
Փ	գանձված է	A
Տ	Taxe perçue	Y
Փ		P
Ո		O
Ս		S
Տ		T

ԵՐԵՎԱՆ YEREVAN 0002 06 DEC 2022

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող
հանձնաժողով
Armenia ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՍԱՐՅԱՆ Փ. 22
0002
ՍԱ/34.4-Դ4-2/4266-2022 պ/տ

L0106946120AM

ՀԵՏ ՎԵՐԱԴԱՐՁ RETURN	CN15
☐ Անհայտ/ Unknown	☐ Մերժված / Refused
☐ Տեղափոխված/ Gone away	☑ Չի պահանջվել/ Unclaimed
☐ Ճիշտ հասցե/ Insufficient address	☐

Ետ վերադարձման ամսաթիվը / Return Date 27.12.22 Rec[illegible]

27 DEC 2022

«Արզնիգազ» ՍՊԸ
Armenia ԿՈՏԱՅՔ Արզնի համայնք, Երևան-Սևան մայրուղի, հ. 2

ARMENIA YEREVAN
29 DEC 2022
0002

10 DEC 2022

ARMENIA YEREVAN
29 DEC 2022
0002

ARMENIA
28 DEC 2022

Տրման նշանակման օպերատոր /
Designated operator of origin

ԾԱՆՈՒՑԱԳԻՐ ստացման/հանձնման/վճարման/գրանցման
ADVICE of receipt/of delivery/of payment/of entry

CN 07

Առաքանու հասցեատեր/ Addressee of the item

«Արզնիգազ» ՍՊԸ ԿՈՏԱՅՔ Արզնի համայնք, Երևան-Սևան մայրուղի, հ. 2

A.R.

Ծառայողական/
On postal service
Ծանուցագիրը վերադարձնող գրասենյակի կնիքը/
On postal service

Առաքանու բնույթը/Nature of the item

☐ Առաջնային նամակ/ Priority letter
☐ Հրատարակչություն/ Printed paper
☐ Ծանրոց/ Parcel
☐ Ոչ առաջնային նամակ/ Non-Priority letter

☐ Պատվիրված/Registered
☐ Վկայագրված հանձնում/ Recorded delivery
☐ Գնահատված/ Insured

Առաքանու թիվը/
No of item LO106946120AM

Գումար/Amount 0

☐ Հասարակ դրամական փոխադրություն/ Ordinary money order

Գումար/Amount 0

☐ Փոխանցման անդորրագիր/ Inpayment money order
☐ Վճարման անդորրագիր/ Outpayment cheque

Առաջնային/Priority
Օդային/By airmail

Վերադարձնել /
Return to

Լրացվում է ուղարկողի կողմից/To be filled in by the receiver

Անուն կամ գրասենյակի անվանում/ Name	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով
Փողոց և թիվ/ Street and No	ՍԱՐՅԱՆ Փ. 22 0002
Բնակավայր և երկիր/ Locality and country	Հայաստան ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ

AL0106946120AM

Լրացվում է նշանակման վայրում/To be completed at the point of destination

Վերոնշված առաքանին պատշաճ կերպով/The item mentioned above has been duly

☐ հանձնվել է/ delivered
☐ վճարվել է/ paid
☐ գրանցվել է ընթացիկ փոստային հաշվին/ credited to giro account

Ամսաթիվ և ստորագրություն/Date and signature

Այս ծանուցագիրը կարող է ստորագրվել հասցեատիրոջ, կամ եթե նշանակման երկրի կանոնակարգը նախատեսում է այդ, այլ լիազորված անձի կողմից/ The advice may be signed by the addressee or,if the regulations of the country of destination so provide by another authorized person.

Հավելյալ Նշում 1՝ ՍԱ/34.4-Դ4-2/4266-2022 պ/տ
Հավելյալ Նշում 2՝

powered by Envelope, envelope.haypost.am

29 DEC 2022

29 DEC 2022